հիները։ Այստեղ մաղթանք է կատարում և դրանով վերջանում տօնախմբութեան առաջին մասը։

Երեկոյեան Պետերբուրգի դումայում հանդիսաւոր նիստ է տեղի ունենում, որտեղ քաղաքագլուխ Լելեանովը մի առ մի թւում է Պետերբուրգին հասած արքայական ողորմածութիւնները՝ սկսած Պետրոս Մեծից. այնուհետև խօսում են պանազան հիմնարկութիւններից և օտար ու գաւառական 67 քաղաքներից եկած պատգամաւորները. ի միջի այլոց խօսում են նաև Բեռլինի բիւրգերմայստերը (քաղաքագլուխ) և Փարիզի քաղաքային վարչութեան նախագահը։

Ի յիշատակ Պետերբուրգի 200 ամեայ տօնախմբութեան պատրաստուած են մի քանի հազար մեդալներ, որոնց մէկ կողմում նկարուած են Մեծն Պետրոս և Նիկողայոս II կայսրների պատկերները. իսկ միւս կողմում՝ Ռուսաստանը ներկայացուած է իբրև մի կին՝ թագը գլխին, որի վրայ բարձրից արևի ճառագայթներ են ընկնում։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Բաղուաբնակ պ. Դաւ. Թ Իւզբաշեանը հանդուցեալ Ա. Երիցեանի մատենադարանը գնելով նուիրել է ս. Էջմիածնին. մի և նոյն ժամանակ 15,000 ռուբլի նուիրել է Էջմիածնի մատենադարանի առանձին մի շէնք կանգնելու այնտեղ։ Իւր այս նպատակի իրագործումը պ. Իւզբաշեանցը յանձնել է բարձր. Տ. Մեսրովպ վարդապետին, որ յատակագիծը պատրաստել է տուել արդէն և այս օրերս կձեռնարկէ շինութեան։

ԿԻԼԻԿԻՈՑ Տ. Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ

Ապրիլ ամսի 20 ին Սիս քաղաքում տեղի է ունեցել Կիլիկիայի նորընտիր կաթուղիկոս Ս. Սահակ Խաբայեանցի օծումը՝ չորս եպիսկոպոսների, տասնեակ վարդապետների, բազմաթիւ քահանաների և բիւր ժողովրդի ներկայութեամբ։ Թէև Սսոյ մայր տաճարը բաւականին ընդարձակ է, բայց ամեն կողմից եկած ուխտաւորներին գոհացումն տալու նպատակով Ս. կաթողիկոսի օծումը կատարուել է եկեղեցու բակում. տեղացիների ասելով՝ երբէք Սիս այդչափ բազմութիւն չէր հաւաքուել։ Հանդիսաւոր պատարագի միջոցին կաթուղիկոսը սեղանի մէջ տեղը ծունկ է չոքում, իսկ Պատրիարքարանի պատուիրակ և հրաւիրակ Տ. Մովսէս եպիսկոպոս Կէօմրիւքճեանը արծաթապատ աղաւնու կտցից միւռոնի կաթիլներ թափելով նրա գլխին՝ օծում է նրան կաթուղիկոս Տաճն Կիլիկիոյ, որի միջո-